

# ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԵՐԿՐԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ<sup>1</sup>

(Փորձագիտական հետազոտության տվյալների վերլուծություն)

## Ներածություն

2009 թվականին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, տեղական լրատվամիջոցների մոնիտորինգին զուգահեռ, երկրի բոլոր մարզերում ու Երեւանում ՁԼՄ-ների, հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում կատարեց նաեւ փորձագիտական հետազոտություն, որի նպատակն էր պարզել՝

- ՁԼՄ-ների համար տեղեկությունների մատչելիության աստիճանը,
- ՁԼՄ-ների գործունեությունը խոչընդոտելու դեպքերը եւ լրատվամիջոցների շահերի պաշտպանության հարցերում հասարակական, քաղաքական եւ պետական տարբեր կառույցների դերակատարությունը,
- լրագրողական համերաշխության աստիճանը եւ այն բարելավելու ուղիները,
- ՁԼՄ-ների ֆինանսական գործունեության թափանցիկության ու սեփականության եւ գործունեության մենաշնորհայնության ընկալումը,
- ՁԼՄ-ների ու հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների առնչությունները, վերջիններիս համար՝ իրենց տեսակետներն ու կարծիքները ՁԼՄ-ներով արտահայտելու մատչելիությունն ու նրանց գնահատմամբ՝ լրատվամիջոցներում բազմակարծության ապահովման մակարդակը:

## Համառոտ ամփոփում

Հետազոտության արդյունքների ամփոփման համառոտ եզրակացությունը հետեւյալն է.

1. Հայաստանում ՁԼՄ-ների համար տեղեկությունների մատչելիությունը դեռեւս լուրջ խնդիր է: Հետազոտությանը մասնակցած լրատվամիջոցների ներկայացուցիչների (լրագրող փորձագետներ) մոտ 2/3-ը նշում է, որ ոչ բոլոր տեղեկությունները եւ ոչ միշտ են մատչելի: Կան որոշակի թեմաներ, որոնց վերաբերյալ տեղեկությունները դժվարությամբ են տրամադրվում կամ ընդհանրապես չեն տրամադրվում: ՁԼՄ-ների համար տեղեկությունների դժվար մատչելիության

<sup>1</sup> Հետազոտություն իրականացրել, արդյունքներն ամփոփել եւ սույն զեկույցը պատրաստել է սոցիոլոգ Վարդան Գեւորգյանը

մասին վկայում են ոչ միայն լրատվամիջոցների, այլև հետազոտությանը մասնակցած կուսակցությունների ու ՀԿ-ների ներկայացուցիչները (ոչ լրագրող փորձագետներ):

2. Տարբեր կառույցներ ՁԼՄ-ներին տեղեկություններ տրամադրելու գործում խտրականություն են դրսևորում՝ հաշվի առնելով վերջիններիս իշխանամետ կամ ընդդիմադիր, պետական/հանրային կամ մասնավոր, տեղական կամ համերկրային լինելու հանգամանքը:

3. ՁԼՄ-ների ազատության տեսանկյունից՝ մտահոգիչ են նրանց գործունեությանը միջամտությունները, տարբեր տեսակի խոչընդոտումներն ու ճնշումները (լրագրողների մոտ 46%-ը երբեմն, իսկ 10.3%-ը՝ հաճախ բախվում է միջամտությունների ու ճնշումների): Այս առումով մատնանշվում են մի շարք սուբյեկտներ, որոնք տարբեր ձեւերով ու մեթոդներով առավել հաճախ են միջամտում ՁԼՄ-ների գործունեությանը կամ ճնշումներ գործադրում նրանց վրա (ըստ հիշատակումների հաճախականության՝ իրավապահ մարմինները, թաղային հեղինակություններն ու հանցագործ շրջանակները, կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, իշխանական կուսակցությունները):

4. Հայաստանում դեռևս չի ձևավորվել ՁԼՄ-ների եւ լրագրողների իրավունքների ու շահերի պաշտպանության ամուր ավանդույթ եւ կուռ համակարգ: Ցածր է լրագրողական համերաշխության աստիճանը: Իշխանության տարբեր մակարդակի հաստատությունները, մասնավորապես՝ իրավապահ մարմինները, ոչ միայն պատշաճ կերպով չեն պաշտպանում ՁԼՄ-ների իրավունքները եւ օրինական շահերը, այլև՝ հաճախ հենց իրենք են այդ իրավունքներն ու շահերը ոտնահարում: Սա հաստատում են ոչ միայն լրագրողները, այլև հասարակական ու քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները: ՁԼՄ-ները (հատկապես՝ հեռուստաընկերությունները) եւս շատ պասիվ են այլ լրատվամիջոցների լրագրողներին պաշտպանելու գործում: Լրագրողների ընդամենը 12.7%-ն է այն կարծիքին, որ որեւէ ՁԼՄ-ի կամ լրագրողի նկատմամբ բռնությունների կիրառման դեպքում վերջինիս իրավունքների պաշտպանությամբ հանդես են գալիս մյուս լրատվամիջոցները:

5. ՁԼՄ-ները դեռևս լիարժեքորեն չեն իրագործում ժողովրդավարական հասարակությունում իրենց կարելորագույն առաքելություններից մեկը՝ բազմակարծության ապահովումը (լրագրողների ավելի քան 40%-ը համապետական ընտրությունների շրջանում իրենց կողմից բազմակարծության ապահովման մակարդակը գնահատել է ցածր կամ միջին, իսկ ոչ լրագրող փորձագետների խմբի մոտ 53%-ը համոզված է, որ ՁԼՄ-ները հազվադեպ են ապահովում կամ երբեք չեն ապահովում բազմակարծությունը): Այդ գործում, հատկապես ընտրական ժամանակահատվածներում, ՁԼՄ-ների առջև ծառանում են մի շարք դժվար հաղթահարելի խոչընդոտներ:

6. Բավարար չափով չի ապահովվում լրատվամիջոցների ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը (լրագրող փորձագետների միայն 12.3%-ի կարծիքով է այն ապահովվում, 43%-ի կարծիքով չի ապահովվում, մոտ 44%-ն էլ դժվարացել է պատասխանել այդ հարցին):

7. Չի պահպանվում նաեւ «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հեռարձակման հակամենաշնորհային պահանջը (ՁԼՄ-ների ներկայացուցիչների 27.1%-ի կարծիքով՝ այն չի պահպանվում, իսկ 47.7%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին): Յակամենաշնորհային պահանջը չպահպանելու եւ ՁԼՄ ոլորտում սեփականության ոչ թափանցիկության իրողության մասին են վկայում նաեւ կուսակցական փորձագետների 32 եւ ՀԿ ներկայացուցիչների 23.5%-ը: Չկողմնորոշվածները կազմում են այս խմբերի, համապատասխանաբար, 40 եւ 41.7%-ը:

Ամփոփիչ 1-3 աղյուսակներում ներկայացված են լրագրող եւ ոչ լրագրող փորձագետների կողմից առավել հաճախ նշված հետեւյալ ցուցանիշները՝

1. առավել դժվար տրամադրվող տեղեկությունները,
2. տեղեկությունների տրամադրումը մերժելու առավել հաճախ բերվող պատճառաբանությունները,
3. տեղեկությունները տրամադրելու հարցումները առավել հաճախ մերժող սուբյեկտները,
4. ՁԼՄ-ներին տեղեկատվության գաղտնի աղբյուրը բացահայտելու պահանջ առավել հաճախ ներկայացնող սուբյեկտները,
5. ՁԼՄ-ների գործունեությանը միջամտելու կամ նրանց նկատմամբ ճնշումներ գործադրելու համար առավել հաճախ առիթ տվող թեմաները,
6. միջամտության կամ ճնշումների առավել տարածված ձեւերն ու մեթոդները,
7. բազմակարծության լիարժեք ապահովմանն առավել հաճախ խանգարող գործոնները,
8. միջամտությունների դեպքերում պաշտպանվելու համար առավել հաճախ կիրառվող միջոցները,
9. ՁԼՄ-ների գործունեությունն առավելապես խոչընդոտող սուբյեկտները,
10. ՁԼՄ-ների եւ լրագրողների իրավունքների խախտման դեպքերում նրանց օրինական շահերը առավել հաճախ պաշտպանող սուբյեկտները,
11. կուսակցությունների եւ ՀԿ-ների ներկայացուցիչների՝ ՁԼՄ-ների հետ առնչվելու առավել տարածված ձեւերը:

Ամփոփիչ աղյուսակ 1.

**Տեղեկությունների մատչելիության հետ կապված լրագրող փորձագետների կողմից առավել հաճախ տրված պատասխանները**

h/h	Առավել դժվար տրամադրվող	Տեղեկությունների	Տեղեկություններն	Առավել հաճախ
-----	-------------------------	------------------	------------------	--------------

	<b>տեղեկությունները</b>	<b>տրամադրումը մերժելու առավել հաճախ բերվող պատճառաբանությունները</b>	<b>առավել հաճախ մերժող սուբյեկտները</b>	<b>տեղեկատվության գաղտնի աղբյուրը բացահայտելու պահանջներ կայացնող սուբյեկտները</b>
1	Հանցագործությունների, քրեական իրավիճակի, հետաքննության փուլում գտնվող գործերի վերաբերյալ	Չկա վերադաս մարմնի, կազմակերպության կամ անմիջական ղեկավարի թույլտվությունը	Ուժային կառույցները	Պետական կառավարման մարմինների ղեկավարները եւ այլ պաշտոնյաներ
2	Ուժային կառույցների (ոստիկանություն, դատախազություն, ԱԱԾ) գործունեության վերաբերյալ	Հիմա հարմար չէ, հետո կտրամադրենք	ՏԻՄ-երը	Այն մարդիկ, ում առնչվում է կոնկրետ հրապարակումը
3	ՏԻՄ-երի գործունեության եւ համայնքային խնդիրների վերաբերյալ	Տեղեկությունը հրապարակման ենթակա չէ (պարունակում է պետական, առևտրային կամ այլ գաղտնիք)	Նախարարությունները	Ուժային կառույցները
4	Դատական համակարգի գործունեության, դատական նիստերի վերաբերյալ	Անփութություն են դրսևորում (մեկը մյուսի վրա է գցում)	Հարկային եւ մաքսային ծառայությունները	Այն անձանց ղեկավարները կամ մտերիմները, ում առնչվում է հրապարակումը
5	Բանկային համակարգի եւ ֆինանսական խնդիրների վերաբերյալ	Մերժում են առանց որել է պատճառաբանության կամ անհեթեթ պատրվակով	Դատական մարմինները	Օլիգարխներն ու գործարարները

Ամփոփիչ աղյուսակ 2.

**ՁԼՄ-ների գործունեությանը միջամտելու հետ կապված լրագրող փորձագետների կողմից առավել հաճախ տրված պատասխանները**

h/h	<b>ՁԼՄ-ների գործունեությանը միջամտելու կամ նրանց նկատմամբ ճնշումներ գործադրելու համար առավել հաճախ առիթ տվող թեմաները</b>	<b>Միջամտության կամ ճնշումների առավել տարածված ձեւերն ու մեթոդները</b>	<b>Բազմակարծության լիարժեք ապահովմանն առավել հաճախ խանգարող գործոնները</b>	<b>Միջամտությունների դեպքերում պաշտպանվելու համար առավել հաճախ կիրառվող միջոցները</b>
1	Ներքաղաքական թեմաներ, այդ թվում՝ ընտրություններ, «մարտի 1» եւ այլն	Խնդրանք, համոզում, հորդոր	Երկրում տիրող անազատության մթնոլորտը, խոսքի ազատության ցածր մակարդակը, ընտրությունների ընթացքում կիրառված (այդ թվում՝ պետական մարմինների կողմից) ճնշումները, ՁԼՄ-ի փակման վտանգը	Հանդես են գալիս հայտարարությամբ
2	Ազդեցիկ պաշտոնյաների	Ազդեցիկ անձանց գանգեր	Քաղաքական լուրեր հեռարձակելուց	Դիմում են իրավապահ մարմիններին

	գործունեություն		խուսափելը, կոնկրետ ընտրությունների լուսաբանմանը չմասնակցելու մարտավարության որդեգրումը, կողմնակալ երեւալու մտավախությունից քաղաքական ուժերին հրավիրելուց ձեռնպահ մնալը	
3	Պետական մարմինների գործունեություն	Հաշվեհարդարի սպառնալիք	Ֆինանսական միջոցների պակասը, ֆինանսական կախվածությունը իշխանական մարմիններից եւ այլ սուբյեկտներից	Դիմում են լրագրողական կազմակերպություններին
4		Տեղական հայրենասիրության շահարկում	Քաղաքական ուժերի պասիվությունը (բոլոր քաղաքական ուժերը չէ, որ դիմել են մեզ)	Դիմում են իրավապաշտպան կազմակերպություններին
5		Ֆիզիկական բռնություններ	ՁԼՄ-ի (լրագրողների) պրոֆեսիոնալիզմի պակասը	Դիմում են այլ ՁԼՄ-ների

Ամփոփիչ աղյուսակ 3.

**ՁԼՄ-ների գործունեության մասին կուսակցությունների ու ՀԿ-ների պատկերացումներն արտացոլող առավել հաճախ նշված պատասխանները**

h/h	Կուսակցությունների եւ ՀԿ-ների ներկայացուցիչների առնչությունները ՁԼՄ-ների հետ	ՁԼՄ-ների գործունեությունն առավել հաճախ խոչընդոտող սուբյեկտները	ՁԼՄ-ների եւ լրագրողների իրավունքները առավել հաճախ պաշտպանող սուբյեկտները
1	ՁԼՄ-ները լուսաբանում են մեր կազմակերպության գործունեությունը, պարբերաբար տեղեկություններ ենք տալիս	Իրավապահ մարմինները	Լրագրողական ՀԿ-ները
2	Թղթակցում են, տպում են հոդվածներ, ինքս նաեւ լրագրող են	Թաղային հեղինակություններն ու հանցագործ շրջանակները	Իրավապաշտպան կազմակերպությունները
3	Մասնակցում են/ենք տարբեր հեռուստահաղորդումների	Կառավարությունը	Հենց իրենք՝ ճնշման ենթարկված ՁԼՄ-ները
4	Հարցազրույցներ են տալիս ՁԼՄ-ներին	ՏԻՄ-երը	Միջազգային կազմակերպությունները
5	ՁԼՄ-ների հետ շփվում են միայն որպես ունկնդիր, ակնդիր կամ ընթերցող (ստանում են տեղեկություններ)	Իշխանական կոալիցիայի կուսակցությունները	Ընդդիմադիր կուսակցությունները

**Հետազոտության մեթոդաբանությունը**

Հետազոտությունն իրականացվել է փորձագիտական հարցման մեթոդով: Ընտրվել են երկու խումբ փորձագետներ՝ ա) ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, բ) կուսակցությունների ու հասարակական

կազմակերպությունների ներկայացուցիչներ: Յուրաքանչյուր խմբի փորձագիտական հարցազրույցի համար մշակվել է առանձին հարցաշար: Հարցումն անվանական էր:

**ՁԼՄ-ների ներկայացուցիչների** համար նախատեսված հարցաշարը կազմված էր երեք թեմատիկ հատվածներից եւ այսպես կոչված «անձնագրային» մասից:

**Առաջին** թեմատիկ մասի հարցերով փորձել ենք պարզել ՁԼՄ-ների ներկայացուցիչների (այսուհետ՝ լրագրող փորձագետներ) կարծիքը հետեւյալ խնդիրների մասին՝

1. տեղեկությունների մատչելիության աստիճանը, ՁԼՄ-ների նկատմամբ խտրականության դրսեւորումները,
2. առավել դժվար տրամադրվող տեղեկությունները, առավել հաճախ մերժող մարմիններն ու մերժման համար առավել հաճախ բերվող պատճառաբանությունները,
3. ՁԼՄ-ների մասնագիտական գործունեությանը միջամտությունների աստիճանը, լրատվամիջոցների եւ լրագրողների նկատմամբ ճնշումները, դրանց դրսեւորման ձեւերն ու մեթոդները,
4. ճնշումներից ու միջամտություններից պաշտպանվելու միջոցները, դրանց արդյունավետությունը, այդ գործում հասարակական, քաղաքական եւ պետական տարբեր կառույցների աջակցության, ինչպես նաեւ՝ այլ ՁԼՄ-ների եւ լրագրողական կազմակերպությունների դրսեւորած մասնագիտական համերաշխության աստիճանը:

**Երկրորդ** թեմատիկ մասի հարցերով փորձել ենք պարզել ՁԼՄ-ների ֆինանսական գործունեության եւ սեփականության թափանցիկության, այդ թվում՝ օրենսդրության հակամենաշնորհային դրույթների պահպանման գնահատումը:

**Երրորդ** թեմատիկ մասի հարցերի նպատակն էր պարզել համապետական, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունների եւ ոչ ընտրական ժամանակահատվածներում ՁԼՄ-ներում բազմակարծության ապահովման աստիճանը եւ բազմակարծությանը խանգարող պատճառները:

**Կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների (ՀԿ)** ներկայացուցիչների համար նախատեսված հարցաշարը եւս կազմված էր երեք թեմատիկ հատվածներից եւ այսպես կոչված «անձնագրային» մասից:

Նախ՝ մուտքային հարցով փորձել ենք պարզել փորձագետների (նրանց կազմակերպությունների) առնչությունները ՁԼՄ-ների հետ:

**Առաջին** թեմատիկ հատվածի հարցերի նպատակն էր պարզել կուսակցությունների եւ ՀԿ-ների ներկայացուցիչների պատկերացմամբ ՁԼՄ-ների գործունեության ազատության աստիճանը, մասնավորապես՝

1. տեղեկությունների մատչելիությունը,
2. ՁԼՄ-ների գործունեությանը միջամտությունները, լրատվամիջոցների եւ լրագրողների նկատմամբ ճնշումները,
3. ՁԼՄ-ների (լրագրողների) գործունեությունը առավել հաճախ խոչընդոտող եւ նրանց շահերը պաշտպանող կառույցները, ինչպես նաեւ՝ փորձագետի ներկայացրած կազմակերպության կողմից ՁԼՄ-ների եւ լրագրողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացված կոնկրետ քայլերը:

**Երկրորդ** թեմատիկ հատվածի հարցերի նպատակն էր պարզել փորձագետների կարծիքը ՁԼՄ-ների կողմից բազմակարծության ապահովման աստիճանի, այդ թվում՝ իրենց ներկայացրած կազմակերպության համար ՁԼՄ-ների միջոցով տեսակետներն արտահայտելու հնարավորությունների վերաբերյալ:

**Երրորդ** թեմատիկ հատվածի նպատակն էր պարզել հեռարձակման ոլորտում հակամենաշնորհային օրենսդրության պահպանման մասին փորձագետների կարծիքը:

Հետազոտությանն ընդհանուր առմամբ մասնակցել է 272 փորձագետ Հայաստանի 10 մարզերից եւ Երեւան քաղաքից, այդ թվում՝ 107 լրագրող եւ կուսակցությունների ու ՀԿ-ների 165 ներկայացուցիչ: Փորձագետների կազմը ըստ մարզերի ներկայացված է 4-րդ աղյուսակում: Մարզերից ընդգրկված փորձագետների թիվը համամասնական չէ մարզի՝ երկրի բնակչության թվում ունեցած տեսակարար կշռին: Այստեղ ավելի շուտ դեր են խաղացել տվյալ մարզում ՁԼՄ-ների առկայությունը, կուսակցությունների ու ՀԿ-ների փաստացի ներկայացվածությունը: Քանի որ լրատվական գործակալությունների, ինտերնետային հրատարակությունների ներկայացուցիչների եւ ազատ լրագրողների թիվը շատ չնչին է, ապա մենք նպատակահարմար ենք համարել այդ հարցվածների պատասխանները առանձին վերլուծության չենթարկել, այլ դիտարկել հեռուստաընկերությունների (ՀԸ) եւ թերթերի հետ: Նկատի ունենալով լրատվական գործակալությունների եւ ինտերնետային հրատարակությունների՝ էլեկտրոնային կապուղիներով սփռվելու հանգամանքը, մենք այդ երկու կատեգորիայի ՁԼՄ-ների ներկայացուցիչներին միացրել ենք ՀԸ ներկայացուցիչների հետ եւ զեկույցում վերջինները ներկայացված են որպես հեռուստալրագրողներ: Ազատ լրագրողներին դիտարկել ենք թերթերի լրագրողների խմբում՝ նկատի ունենալով վերջինների՝ գերազանցապես թերթերին թղթակցելու հանգամանքը: Ռադիոընկերությունները (ՌԸ) եւս էլեկտրոնային ՁԼՄ-ների խմբին են պատկանում, իսկ այդպիսի ՁԼՄ-ների ներկայացուցիչները շատ փոքր թիվ են կազմում փորձագետների համախմբում: Սակայն, նկատի ունենալով ռադիոյի առանձնահատկությունները, զեկույցում ՌԸ-ների ներկայացուցիչներին դիտարկել ենք որպես առանձին լրագրողական խումբ: Այսպիսով, վերլուծություններում լրագրող փորձագետների համախումբը ներկայացված է երեք ենթախմբերով՝ ՀԸ-ների, ՌԸ-ների եւ թերթերի լրագրողներ, իսկ ոչ լրագրող փորձագետների համախումբը՝ երկու ենթախմբով՝ կուսակցությունների ներկայացուցիչներ եւ ՀԿ-ների ներկայացուցիչներ (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4  
Հարցման մասնակիցների կազմը

ՀՀ մարզերը	Վորձագետներ												ԸՆդ.
	Հեռուստաընկերություններ (այդ թվում՝ Լր. գործ. եւ ինտերնետային հրատարակություններ)		Ռադիոընկերություններ.		Թերթ (այդ թվում՝ ազատ Լրագրող)		ԸՆդ. Լրագրող		Կուսակցությունների		ՀԿ-ների		
Արագածոտն	1	20.0	-		4	80.0	5	29.1	4	23.5	8	47.1	17
	1.8	0.9			8.7	3.7	4.6	1.8	8.0	1.5	6.9	2.9	6.2
Արարատ	2	40.0	-		3	60.0	5	23.8	5	23.8	11	52.4	21
	3.5	1.9			6.5	2.8	4.6	1.8	10.0	1.8	9.6	4.0	7.7
Արմավիր	7	77.8	-		2	22.2	9	47.4	6	31.6	4	21.1	19
	12.3	6.5			4.3	1.9	8.4	3.3	12.0	2.2	3.5	1.5	7.0
Գեղարքունիք	5	71.4	-		2	28.6	7	33.3	4	19.0	10	47.6	21
	8.8	4.7			4.3	1.9	6.5	3.3	8.0	1.5	8.7	3.7	7.7
Լոռի	7	70.0	-		3	30.0	10	35.7	6	21.4	12	42.9	28
	12.3	6.5			6.5	2.8	9.3	3.4	12.0	2.2	10.4	4.4	10.3
Կոտայք	6	85.7	-		1	14.3	7	36.8	4	21.1	8	42.1	19
	10.5	5.6			2.2	0.9	6.5	3.3	8.0	1.5	6.9	2.9	7.0
Շիրակ	7	77.8	-		2	22.2	9	47.4	2	6.9	18	62.1	29
	12.3	6.5			4.3	1.9	8.4	3.3	4.0	0.7	15.7	6.6	10.7
Սյունիք	4	40.0	-		6	60.0	10	41.7	5	20.8	9	37.5	24
	7.0	3.7			13.0	5.6	9.3	3.4	10.	1.8	7.8	3.3	8.8
Վայոց Ձոր	2	33.3	-		4	66.7	6	30.0	5	25.0	9	45.0	20
	3.5	1.9			8.7	3.7	5.6	2.2	10.0	1.8	7.8	3.3	7.4
Տավուշ	3	30.0	-		7	70.0	10	40.0	5	20.0	10	40.0	25
	5.2	2.8			15.2	6.5	9.3	3.4	10.0	1.8	8.7	3.7	9.2
Երեւան	14	28.0	4	8.0	12	24.0	30	60.0	4	8.0	16	32.0	50
	24.6	13.1	100	3.7	26.1	11.2	28.0	11.0	8.0	1.5	13.9	5.9	18.4
ԸՆդամենը	57	53.3	4	3.7	46	43.0	107	39.3	50	18.4	115	42.3	272
	100.0	21.0	100	1.5	100	16.9	100	39.3	100	18.4	100	42.3	100.0



## Մաս 1. ՁԼՄ-ների ազատությունը

Խոսքի, տեղեկատվության եւ լրատվամիջոցների ազատությունը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով, «Ձանգվածային լրատվության մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» եւ այլ օրենքներով:

Հետազոտության միջոցով փորձել ենք պարզել, թե լրագրողների, կուսակցական գործիչների եւ ՀԿ-ների ներկայացուցիչների (այսուհետ՝ փորձագետներ) կարծիքով՝

- որքանո՞վ են ՁԼՄ-ների համար մատչելի տարբեր հաստատությունների, այդ թվում՝ պետական կառավարման եւ ՏԻ մարմինների տնօրինած տեղեկությունները,
- հատկապես ի՞նչ կարգի տեղեկություններն են դժվար տրամադրվում ՁԼՄ-ներին, ո՞ր մարմիններն են առավել հաճախ մերժում տեղեկություններ տրամադրելու հարցումները եւ ի՞նչ պատճառաբանություններով,
- մերժման երեւույթը համընդհանու՞ր է, թե՞ խտրականություն է դրվում ՁԼՄ-ների միջեւ,
- տարբեր սուբյեկտները որքանո՞վ են միջամտում ՁԼՄ-ների գործունեությանը կամ ճնշումներ գործադրում նրանց նկատմամբ,
- ո՞ր սուբյեկտներն են առավել հաճախ միջամտում, ինչպիսի՞ տեղեկությունների հրապարակման կամ չհրապարակման համար եւ ի՞նչ ձեւերով ու մեթոդներով,
- ՁԼՄ-ների նկատմամբ ճնշումների շարքում ի՞նչ տեղ ունեն տեղեկատվության գաղտնի աղբյուրների բացահայտման պահանջները, ովքե՞ր են այդպիսի պահանջներ ներկայացնում,
- ինչպիսի՞ ճնշումներ են գործադրվում ՁԼՄ-ների եւ լրագրողների նկատմամբ,
- ինչպիսի՞ վարք են որդեգրում ՁԼՄ-ները ճնշումների ու միջամտությունների դեպքում, որքանո՞վ է այն արդյունավետ լինում,
- ո՞ր սուբյեկտներն են առավել հաճախ հանդես գալիս ՁԼՄ-ների կամ առանձին լրագրողների իրավունքների պաշտպանությամբ, ճնշումների ժամանակ որքանո՞վ են ՁԼՄ-ներին օգնում այլ ՁԼՄ-ները, հասարակական, քաղաքական, պետական, լրագրողական եւ/կամ իրավապաշտպան կազմակերպությունները, ի՞նչ եղանակներով,
- ինչպիսի՞ն է լրագրողական համերաշխության մակարդակը մեր երկրում եւ ի՞նչ է անհրաժեշտ այդ համերաշխության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ:

### 1.1. Տեղեկությունների մատչելիությունը

Լրագրող փորձագետների 22.4%-ի կարծիքով ՁԼՄ-ների համար տեղեկությունները միշտ էլ մատչելի են: Այդպես կարծողների 3/4-ը առավել փորձառու, այսինքն՝ 10 եւ ավելի տարվա

լրագրողական ստաժ ունեցողներն են: Լրագրողների ավելի քան 65%-ը պնդում է, որ ոչ բոլոր տեղեկություններն են մատչելի եւ ոչ միշտ, իսկ 12,1%-ի կարծիքով՝ տեղեկությունները դժվարությամբ են տրամադրվում:

Կուսակցություններն ու ՅԿ-ները ներկայացնող փորձագետների (ոչ լրագրողներ) 2/3-ի կարծիքով պետական կառավարման մարմինների ու ՏԻՄ-երի տնօրինած տեղեկությունները միշտ կամ հիմնականում մատչելի են ՁԼՄ-ների համար, իսկ 29%-ի կարծիքով՝ դրանք հիմնականում կամ միշտ մատչելի չեն: ՅԿ-ների ներկայացուցիչներն ավելի շատ են հավատում տեղեկությունների մատչելիությանը, քան կուսակցությունների ներկայացուցիչները (համապատասխանաբար՝ 67.8 եւ 62%):

Լրագրողների կարծիքով, **առավել անմատչելի կամ դժվար տրամադրվող տեղեկությունների** ցանկը գլխավորում են (չտրամադրման դեպքերի նշումը գերազանցում է 10%-ը) հետեւյալները՝

1. Հանցագործությունների, քրեական իրավիճակի, հետաքննության փուլում գտնվող գործերին վերաբերող տեղեկությունները (30%): Նման տեղեկություններն առավել անմատչելի է ՅԸ լրագրողների համար (38.6%): Թերթերի լրագրողների մոտ 22%-ի համար են դրանք առավել անմատչելի, իսկ ՌԸ ներկայացուցիչներից ոչ-ոք չի նշել այս թեմաների անմատչելի լինելու մասին:
2. Ուժային կառույցների (ոստիկանություն, դատախազություն, ԱԱԾ) գործունեությանը վերաբերող տեղեկությունները (21.5%, այդ թվում՝ ՅԸ լրագրողներ՝ 24.6%, ՌԸ լրագրողներ՝ 25% եւ թերթերի լրագրողներ 17.4%):
3. ՏԻՄ-երի գործունեությանն ու համայնքային խնդիրներին առնչվող տեղեկությունները (17.8%, այդ թվում՝ ՅԸ լրագրողներ՝ 17.5% , թերթերի լրագրողներ՝ 19.6%):
4. Դատական համակարգի գործունեությանը, դատական նիստերի ընթացքին վերաբերող թեմաները (12.1%, այդ թվում ՅԸ լրագրողներ՝ 10.6%, ՌԸ լրագրողներ՝ 25% եւ թերթերի լրագրողներ՝ 13.0%):
5. Ֆինանսաբանկային համակարգի գործունեությանը, ինչպես նաեւ գործարարներին վերաբերող տեղեկությունները (10.3 տոկոս, այդ թվում՝ հեռուստալրագրողներ՝ 12.3%, թերթերի լրագրողներ՝ 8.7%):

Դժվար տրամադրվողների ցանկում, վերը նշվածներից զատ, տեղ են գտել նաեւ տվյալ գերատեսչության ներքին հարաբերություններին, ներքաղաքական խնդիրներին (այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին), պետական իշխանության եւ կառավարման մարմինների, առողջապահական հիմնարկների գործունեությանը, ազդեցիկ պաշտոնյաների եւ նրանց մերձավոր շրջապատի արարքներին վերաբերող տեղեկությունները:

Փորձագետների կարծիքով **ՁԼՄ-ների տեղեկությունների տրամադրումն առավել հաճախ մերժում են** ուժային կառույցները՝ 54.2%: Հաջորդ տեղում ՏԻՄ-երն են՝ 17.8%: Իսկ ավելի քան 12%-ի կարծիքով՝ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվում են նախարարությունները: Հարկային եւ մաքսային ծառայությունները, ինչպես նաեւ դատական մարմինները մերժում են միեւնույն՝ 11.2%-ի կարծիքով:

*Հատկանշական է, որ տեղեկությունների տրամադրման մերժումներ առավել հաճախ ստանում են ՀԸ լրագրողները:*

Բոլոր լրագրող փորձագետների միայն 1.9%-ն է նշել, որ ոչ մի մարմին տեղեկությունների տրամադրման հարցումները չի մերժում:

**Տեղեկությունների տրամադրումը մերժելու առավել տարածված պատճառը**, որը նշվել է լրագրող փորձագետների մոտ 32%-ի կողմից, վերադաս կազմակերպության կամ անմիջական ղեկավարի թույլտվության բացակայությունն է: Այս պատճառաբանությամբ գրեթե հավասարաչափ մերժվում են եւ ՀԸ, եւ թերթերի լրագրողները: Փորձագետների 18.7%-ի վկայությամբ՝ հաջորդ տեղում են՝ «հիմա հարմար չէ, եկեք/զանգեք հետո» (այս պատճառաբանությամբ թերթերի լրագրողների համեմատ ՀԸ լրագրողներին մերժում են երեք անգամ ավելի հաճախ), ինչպես նաեւ՝ «ծեր ուզած տեղեկությունը հրապարակման ենթակա չէ, քանի որ պարունակում է պետական, առևտրային կամ այլ գաղտնիք» պատճառաբանությունները: Լրագրող փորձագետների ավելի քան 10%-ը նշում է, որ տեղեկությունները չեն տրամադրում զուտ անփութության՝ մեկը մյուսի վրա զցելու պատճառով: Այս կերպ տեղեկություն չստացած թերթային լրագրողների տեսակարար կշիռը եռակի մեծ է նույն բախտին արժանացած ՀԸ լրագրողներից: Լրագրողների ավելի քան 12%-ը նշում է, որ մերժում են առանց որեւէ պատճառի կամ անհեթեթ պատճառաբանություններով:

Հետաքրքիր էր պարզել նաեւ, թե տեղեկություններ չտրամադրելը, տեխնիկական պատճառներից զատ, համընդհանուր բնույթ ունի, թե, այնուամենայնիվ, ՁԼՄ-ների միջեւ խտրականություն է դրվում: Լրագրող փորձագետների 1/3-ը այն գնահատում է որպես համընդհանուր երեւույթ (այդպես են կարծում՝ ՀԸ 38.6 եւ թերթերի լրագրողների 30.4 տոկոսը): *Ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն (մոտ 40%) այն լրագրողները, ովքեր համարում են, որ տեղեկություններ տրամադրելիս ՁԼՄ-ների միջեւ խտրականություն է դրսևորվում:* Այս կարծիքին են ՀԸ-ների ներկայացուցիչների մոտ 44, ՌԸ-ների՝ 50 եւ թերթերի լրագրողների՝ ավելի քան 32 տոկոսը:

Երեւույթի ընդհանուր գնահատումից զատ լրագրողները նշել են նաեւ **խտրականության հիմքերը**: Մասնավորապես, մոտ 29%-ի կարծիքով խտրականություն է դրվում՝ ՁԼՄ-ի իշխանամետ կամ ընդդիմադիր լինելը հաշվի առնելով: Այսպիսի խտրականության են հանդիպում թերթերի լրագրողների 1/3-ը, ՌԸ եւ ՀԸ լրագրողների մոտ 1/4-ը: Հաջորդը՝ ՁԼՄ-ի տեղական (տարածաշրջանային) կամ համերկրային լինելն է: Այս հիմքով խտրականության է հանդիպում լրագրողների մոտ 29%-ը՝ (բացառապես մարզային ՁԼՄ-ների ներկայացուցիչներ):

Տեղեկությունների տրամադրման մերժումը խտրականությամբ բացատրողների ավելի քան 7%-ի կարծիքով հիմքում ՁԼՄ-ի պետական կամ մասնավոր լինելն է, իսկ 35.7%-ը ընդգծում է միայն փաստը՝ չնշելով որեւէ հիմք:

## 1.2. Միջամտությունները ՁԼՄ-ների եւ լրագրողների գործունեությանը

Հետազոտության տվյալների ամփոփմամբ պարզվեց, որ լրագրող փորձագետների մոտ 40%-ն իր մասնագիտական գործունեության ընթացքում որեւէ միջամտության կամ ճնշման չի ենթարկվել: Ընդ որում, այդպիսիների խմբում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն թերթերի լրագրողները՝ մոտ 60%: Միջամտություններից զերծ գործում է ՀԸ լրագրողների 38.1%-ը եւ ՌԸ լրագրողների 1/4-ը: Լրագրողների մոտ 46%-ը երբեմն է հանդիպում միջամտությունների, իսկ 10.3%-ը՝ հաճախ: Միջամտությունների երբեմն հանդիպող ՀԸ լրագրողների տեսակարար կշիռը գրեթե կրկնակի մեծ է այդ նույն հաճախությամբ խոչընդոտի հանդիպող թերթային լրագրողների խմբից: ՌԸ լրագրողների 3/4-ը եւս նշել է, որ երբեմն միջամտում են իրենց գործունեությանը: ՀԸ լրագրողները գերակշռում են նաեւ հաճախակի միջամտության ենթարկվածների խմբում՝ ավելի քան 54%:

ՁԼՄ-ների մասնագիտական գործունեությանը միջամտությունների եւ դրանց նկատմամբ ճնշումների մասին պատկերացումների առումով հետաքրքրական է նաեւ ոչ լրագրող փորձագետների կարծիքը: Մասնավորապես, ՀԿ-ների եւ կուսակցությունների ներկայացուցիչների, համապատասխանաբար, 82.6 եւ 84 տոկոսը նշում են, որ տեղյակ են ՁԼՄ-ների եւ լրագրողների մասնագիտական գործունեությանը միջամտություններին, նրանց նկատմամբ ճնշումների ու ոտնձգությունների դեպքերին:

Ինչ վերաբերում է **միջամտության կամ արտաքին ճնշման պատճառ դարձած թեմաներին**, ապա, լրագրող փորձագետների կարծիքով, ամենից հաճախ դրա տեղիք են տվել ներքաղաքական, այդ թվում՝ ընտրություններին եւ 2008 թվականի մարտի 1-ի դեպքերին առնչվող թեմաները. մոտ 17%: Ընդ որում, այս թեմաներով թերթերի համեմատ չորս անգամ ավելի հաճախ միջամտություններ են եղել ՀԸ-ների նկատմամբ: Առավել հաճախ միջամտությունների պատճառ դարձած հաջորդ թեման ազդեցիկ պաշտոնյաների գործունեությունն է՝ 14%: Երրորդ տեղում պետական մարմինների գործունեությանը վերաբերող թեմաներն են՝ 7.5%:

**Միջամտությունների առավել տարածված ձեւը** խնդրանքն է, համոզելը կամ հորդորելը՝ մոտ 31%: Այն կիրառվել է ՀԸ 38.6%-ի, ՌԸ 50%-ի եւ թերթերի լրագրողների մոտ 20%-ի նկատմամբ: Երկրորդ տեղում ազդեցիկ անձանց զանգերն են՝ 23.4%: Երրորդ տեղում հաշվեհարդարի սպառնալիքներն են (15%), որին ՀԸ-ների եւ թերթերի ներկայացուցիչները գրեթե հավասարապես են ենթարկվում: Մարզային ՀԸ լրագրողների նկատմամբ հաճախ կիրառվում է նաեւ տեղական հայրենասիրության շահարկման մեթոդը. «մի հող ու ջրի մարդիկ ենք, անհարմար է»:

Ֆիզիկական բռնությունը կիրառումը՝ որպես ճնշման ձեւ, նշել է լրագրողների ավելի քան 24%-ը: Լրագրողների 41.1%-ը նշել է նաեւ, որ իրենց կամ իրենց ՁԼՍ-ի այլ լրագրողի նկատմամբ հազվադեպ, իսկ 4.7%-ը՝ հաճախ եղել են ֆիզիկական բռնություններ: Հաճախ ֆիզիկական բռնության ենթարկված թերթերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը քառակի մեծ է հեռուստալրագրողների համեմատ: ՌԸ-ների ներկայացուցիչներից ոչ-ոք ֆիզիկական բռնության չի ենթարկվել:

Հետազոտությանը փորձ է արվել պարզել, թե լինու՞մ են, արդյոք, լրագրողների **տեղեկատվության աղբյուրների բացահայտման պահանջներ**: Փորձագետների մոտ 58%-ին երբեւէ նման պահանջ չի ներկայացվել: Ավելի քան 24%-ը նշել է, որ հազվադեպ, իսկ մոտ 13%-ը՝ հաճախ իրենցից պահանջել են բացահայտել տեղեկատվության աղբյուրը: Այդ պահանջին հաճախակի բախված թերթերի լրագրողների խումբը ավելի քան կրկնակի մեծ է ՀԸ լրագրողների խմբից:

Հարցաթերթում հաջորդ՝ *«Ու՞մ կողմից են ներկայացվում նման պահանջները»* հարցը դրված էր բաց տեսքով, այսինքն՝ փորձագետներն իրենք պետք է մանրամասնեին, ավելին՝ իրավունք ունեին նշել մեկից ավելի տարբերակներ: Նշվել են տասից ավելի սուբյեկտներ, որոնցից առավել հաճախ՝ «պետական կառավարման մարմինների ղեկավարներն ու պետական պաշտոնյաները» (15%), «այն մարդիկ, ում առնչվում է հրապարակումը՝ անկախ իրենց կարգավիճակից» (11.2%), «ուժային կառույցները» (8.4%): Ի դեպ, պետական պաշտոնյաներն ու իրավապահ մարմինները աղբյուրի բացահայտման պահանջ ավելի հաճախ ներկայացրել են ՀԸ-ների, քան թերթերի ներկայացուցիչներին: Հակառակ սրան, թերթերին նման պահանջ ավելի քան երեք անգամ շատ ներկայացրել են այն մարդիկ, ում առնչվել է կոնկրետ հրապարակումը:

Մինչ ՁԼՍ-ների նկատմամբ կիրառվող ճնշումների եւ միջամտությունների վերաբերյալ **կուսակցությունների ու ՀԿ-ների ներկայացուցիչների պատկերացումները պարզելը** փորձել ենք տեղեկանալ, թե վերը նշված խմբերի փորձագետներն իրենց գործունեության բերումով ինչպիսի առնչություններ ունեն ՁԼՍ-ների հետ: Հարցվածներն ամենից շատ հիշատակել են այն, որ «ՁԼՍ-ները լուսաբանում են իրենց կազմակերպությունների գործունեությունը, եւ իրենք պարբերաբար տեղեկություններ են տրամադրում նրանց» (36.4%): ՀԿ-ների ներկայացուցիչների ենթախմբում առնչության այս ձեւը նշողների տեսակարար կշիռը (45.2%) գրեթե երեք անգամ մեծ է կուսակցությունների ներկայացուցիչների համապատասխան ենթախմբից:

ՁԼՍ-ների հետ առնչության հաջորդ առավել շատ հիշատակված եղանակը հետեւյալն է. «թղթակցում են, ինքս հողվածներ են գրում, լրագրող են» (15.2%): Այդպիսի պատասխան տվածների տեսակարար կշիռը 1.2 տոկոսային միջով բարձր է կուսակցությունների ներկայացուցիչների խմբում:

Ոչ լրագրող փորձագետների 11.5%-ը ՁԼՍ-ների հետ առնչվում է տարբեր հեռուստահաղորդումների մասնակցելու միջոցով (ՀԿ-ների եւ կուսակցությունների ներկայացուցիչները գրեթե նույն համասանույթամբ): Փորձագետների այս խմբի գրեթե 11%-ը

լրատվամիջոցներին հարցազրույցներ է տալիս: Նույնքան մարդ էլ որպես ՁԼՄ-ների հետ առնչության միակ ձեւ նշել է թերթերի ընթերցող, հեռուստադիտող կամ ռադիոուսկուհի լինելու հանգամանքը: Առնչության այս ձեւը նշողների տեսակարար կշիռը գրեթե եռակի մեծ է կուսակցությունների ներկայացուցիչների խմբում:

Փորձագետները նշել են նաև իրենց կազմակերպությունների կողմից մամուլի ասուլիսների կազմակերպումը: ՁԼՄ-ների հետ այդպիսի առնչություններ ունեցողների խմբում 2.5 անգամ ավելին են ՀԿ-ների ներկայացուցիչները: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այն փորձագետները, ովքեր նշել են, թե ՁԼՄ-ների միջոցով իրենց կազմակերպությունները հրապարակում են հայտարարություններ կամ տարբեր հարցերի մասին պարզաբանումներ են տալիս (6.7%, որի մոտ 73%-ը կուսակցությունների ներկայացուցիչներն են): Նույնքան հարցվածներ էլ նշել են, որ ՁԼՄ-ների հետ իրականացնում են համատեղ ծրագրեր եւ այլն:

Կուսակցությունների ու ՀԿ-ների ներկայացուցիչները եւս հաստատեցին այն իրողությունը, որ ՁԼՄ-ների գործունեությունը առավել հաճախ խոչընդոտվում է իրավապահ մարմինների (51.5%), օլիգարխների ու գործարարների (47.3%) եւ թաղային հեղինակությունների ու հանցագործ շրջանակների (26.7%) կողմից (կարելի էր նշել մի քանի պատասխաններ):

Նշված սուբյեկտներից հետո քաղաքական ու հասարակական գործիչները որպես ՁԼՄ-ների գործունեությունն առավել հաճախ խոչընդոտող սուբյեկտներ են նշել ՀՀ կառավարությունը, ՏԻՄ-երը եւ իշխանական կոալիցիայի կուսակցությունները (21.2-ական %): Հարցվածների կարծիքով ՀՀ մարզային ու դատական իշխանությունները եւս զերծ չեն ՁԼՄ-ների գործունեությունը խոչընդոտելուց (համապատասխանաբար՝ 16.4 եւ 11.5 %): Ընդդիմադիր կուսակցությունները որպես ՁԼՄ-ների գործունեությունը խոչընդոտող սուբյեկտներ նշել է փորձագետների 3%-ը: Բոլոր իշխանական մարմիններից որպես խոչընդոտող սուբյեկտ առավել քիչ է հիշատակված ՀՀ օրենսդիր իշխանությունը:

*Հետաքրքիր է, որ դատական իշխանություններին, իրավապահ մարմիններին եւ թաղային հեղինակություններին որպես ՁԼՄ-ների գործունեությունը խոչընդոտող սուբյեկտներ ավելի հաճախ հիշատակել են քաղաքական, քան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:*

### **1.3. ՁԼՄ-ների եւ լրագրողների իրավունքների պաշտպանությունը**

Այս թեմայով առաջադրված հարցերի պատասխանների ամփոփումից պարզվեց, որ լրագրողների եւ ՁԼՄ-ների նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնությունների եւ այլ ճնշումների դեպքում լրատվամիջոցներն ամենից հաճախ իրենք են հանդես գալիս հայտարարությամբ (34.6%): Այս եղանակին առավել շատ դիմում են ՀԸ-ները: Ռադիոլրագրողները պատասխանել են, որ իրենց նկատմամբ ոչ մի անգամ բռնություն չի կիրառվել, հետեւաբար նման դեպքերի համար չեն նշել նաև որեւէ միջոց: Հաջորդ ամենաշատ նշված միջոցը իրավապահ մարմիններին դիմելն է (մոտ

20%): Սրանից ՉԸ լրագրողների համեմատ կրկնակի հաճախ օգտվում են թերթերի ներկայացուցիչները: Լրագրողների 16.8%-ը դիմում է լրագրողական, 11.2%-ը՝ իրավապաշտպան կազմակերպությունների եւ միայն 9.3%-ը՝ այլ ՁԼՄ-ների օգնությամբ: Լրագրող փորձագետների մոտ 1/4-ը նշել է, որ նման դեպքերում դիմում են այլ միջոցների, այդ թվում՝ 62.5% դեպքերում դիմակայում են սեփական միջոցներով («սեփական միջոցներ» ասածը չի կոնկրետացվում): 16.7%-ը նշում է, որ անտեսում է ճնշումը եւ ոչինչ էլ չի ձեռնարկում, 8.3%-ը՝ որ փորձում է բացատրական աշխատանքներ տանել խոչընդոտողների շրջանում կամ տեղեկացնում է ճնշումներ կիրառողների վերադասներին եւ այլն: Ընդամենը մեկ հեռուստալրագրող է նշել, որ նման դեպքում տեղի է տվել եւ դադարեցրել նկարահանումները:

Իսկ լրագրողական գործունեության ազատությունը պաշտպանելու համար որքանով են արդյունավետ վերը նշված միջոցները: Լրագրող փորձագետների կեսից ավելին այդ հարցին չի պատասխանել, 14%-ը նշել է, թե *բոլոր դեպքերում* հարցը լուծվում է հօգուտ իրենց: Այսպիսի պատասխան տվողները ՉԸ-ներում եւ թերթերում գրեթե հավասար տեսակարար կշիռ ունեն: Լրագրողների քառորդ մասը նշել է, որ *մեծ մասամբ* հարցը լուծվում է իրենց օգտին: *Ընդ որում, այսպես կարծողները կրկնակի ավելի մեծ թիվ են կազմում ՉԸ լրագրողների շրջանում: Ճնշումներին մեծ մասամբ եւ միշտ տեղի տվողների տեսակարար կշիռը ՉԸ լրագրողների շրջանում կազմում է 5.3%, իսկ թերթերի լրագրողների շրջանում՝ 13%:*

Չետաքրքիր էր պարզել նաեւ, թե կուսակցությունների ու ՉԿ-ների ներկայացուցիչների կարծիքով **ո՞ր սուբյեկտներն են առավել ակտիվորեն պաշտպանում լրագրողների իրավունքները** (հնարավորություն էր տրված նշելու մի քանի պատասխան): Այս խմբի փորձագետների 62.4%-ի կարծիքով այդ դերում ամենից շատ հանդես են գալիս լրագրողական ՉԿ-ները, հաջորդ տեղում են իրավապաշտպան կազմակերպությունները (51.5%): Փորձագետների մոտ կեսը համարում է, որ ՁԼՄ-ներին ճնշումներից լավագույնս պաշտպանում են հենց իրենք՝ ճնշման ենթարկված լրատվամիջոցները: Իրավունքների պաշտպանների շարքում չորրորդ տեղն են զբաղեցնում միջազգային կազմակերպությունները (մոտ 40%): Լրագրողների իրավունքների առավել ակտիվ պաշտպանների հնգյակը եզրափակում են ընդդիմադիր կուսակցությունները՝ 26.1%: Իշխանության տարբեր մակարդակի հաստատություններին, իրավապահ մարմիններին եւ այլ կառույցներին ՁԼՄ-ների իրավունքների պաշտպան է համարում ոչ լրագրող փորձագետների չնչին մասը (6.6%): Չետաքրքիր է, որ ընդամենը 12.7%-ն է այն կարծիքին, որ որեւէ ՁԼՄ-ի կամ լրագրողի նկատմամբ բռնությունների կիրառման դեպքում վերջինիս իրավունքների պաշտպանությամբ հանդես են գալիս բոլոր ՁԼՄ-ները:

**Լրագրողական համերաշխության** վիճակը եւս ներկա հետազոտության խնդիրներից էր: Լրագրող փորձագետների ավելի քան 55%-ը որեւէ կերպ չի գնահատել բռնությունների դեպքում այլ ՁԼՄ-ներից օգնություն ստանալու աստիճանը: Նրանց ընդամենը 2.8%-ն է նշել, որ որեւէ ՁԼՄ-ի կամ լրագրողի նկատմամբ բռնությունների դեպքերում այլ լրատվամիջոցները միշտ օգնության են

հասնում: Այդպես կարծողները բոլորն էլ թերթերի ներկայացուցիչներ են: Լրագրողների մոտ 20%-ի կարծիքով նման դեպքերում այլ ՁԼՄ-ները հաճախ են օգնության հասնում, իսկ ավելի քան 22%-ը համարում է, որ այլ ՁԼՄ-ները հազվադեպ են ձեռք մեկնում գործընկերներին կամ ընդհանրապես չեն օգնում:

Ինչ վերաբերում է կոնկրետ լրատվամիջոցի կամ լրագրողի նկատմամբ ֆիզիկական բռնության կամ այլ տիպի ճնշումների դեպքերում լրագրողական եւ/կամ իրավապաշտպան կազմակերպությունների ցուցաբերած օգնությանը, ապա լրագրողների միայն 43%-ն է որեւէ կերպ գնահատել այդ երեւույթը: Նրանց 21.5%-ը նշում է, որ այս կազմակերպությունները միշտ կամ հաճախ հասել են օգնության: Նույն քանակի փորձագետներ էլ այն կարծիքին են, որ նշված կազմակերպությունները հազվադեպ են ձեռք մեկնել իրենց կամ ընդհանրապես չեն օգնել:

Կոնկրետ ՁԼՄ-ների կամ լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունների ու այլ ճնշումների դեպքերում ընդհանրապես բոլոր տիպի ՌԿ-ների ու կուսակցությունների կողմից ձեռնարկվող քայլերին վերաբերող հարցին ի պատասխան ոչ լրագրող փորձագետների 12.7%-ը ոչինչ չի նշել, 43%-ը նշել է, որ ոչ մի անգամ չի օգնել: Ընդ որում՝ այսպիսի վարքագիծ դրսևորածների թվում ավելի քան կրկնակի մեծ է ՌԿ-ների ներկայացուցիչների տեսակարար կշիռը: Ոչ լրագրողների ավելի քան 29%-ը նշել է, որ նման դեպքերում 3-ից ավել անգամ աջակցել է ՁԼՄ-ներին: Մոտ 8%-ը նշել է 2-3 անգամ օգնության մասին: Մեկ անգամ օգնություն ցուցաբերածները 4%-ից մի փոքր ավելին են:

Երբ խնդիրն ավելի մասնավորացվեց՝ հետազոտությանը մասնակցած կուսակցությունների ու ՌԿ-ների ներկայացուցիչներին առաջարկվեց թվարկել այդպիսի դեպքերի կոնկրետ օրինակներ, ապա *կուսակցական փորձագետները* նշեցին լրագրողների կամ ՁԼՄ-ների իրավունքների պաշտպանության 11 կոնկրետ դեպք, իսկ ՌԿ-ների անդամները՝ 22: Հիշատակվել են հետեւյալ անձանց կամ ՁԼՄ-ներին առնչվող դեպքերը. Գագիկ Շամշյան, Էդիկ Բաղդասարյան, Արգիշտի Կիվիրյան, Նվեր Մնացականյան, «ՉԺ» թերթի թղթակից (անունը նշված չէ), Հովհաննես Գալաջյան, «ԳԱԼԱ», «Ա1+» հեռուստաընկերություններ, «Ազատություն» ռադիոկայան: Վերը նշվածներից կուսակցությունների ու ՌԿ-ների կողմից առավել մեծ պաշտպանության են արժանացել հետեւյալ ՁԼՄ-ներն ու լրագրողները՝

1. «ԳԱԼԱ» ՉԸ,
2. «Հետաքննող լրագրողներ» ՌԿ ղեկավար Էդիկ Բաղդասարյան,
3. Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյան,
4. «Շանթ» ՉԸ մեկնաբան Նվեր Մնացականյան:

Կուսակցությունների 40 եւ ՌԿ-ների 15.7%-ը նշել են իրենց աջակցության մասին՝ չբերելով սակայն որեւէ կոնկրետ օրինակ:



Մենք փորձել ենք պարզել նաեւ լրագրող փորձագետների կարծիքն ընդհանրապես *լրագրողական համերաշխության* մասին: Այդ նպատակով հարցվողների առջեւ խնդիր էր դրվել հինգ բալանոց սանդղակով գնահատել համերաշխության մակարդակը, որտեղ «1»-ը նշանակում է համերաշխության իսպառ բացակայություն, իսկ «5»-ը՝ համերաշխության բարձրագույն մակարդակ: Մարզերի լրագրողների 20.6%-ը լրագրողական համերաշխությանը տվել է ցածրագույն «1» եւ «2» գնահատական: Միջին՝ «3» է գնահատել այդ խմբի 27.1%-ը, իսկ բարձր՝ «4» եւ «5» գնահատական՝ 28%-ը: Այս առումով *մարզերի* լրագրողների շրջանում թերթերի լրագրողներն ակնհայտ լավատես են:

Լրագրողների ամբողջ համախմբում (ներառյալ՝ մայրաքաղաքի լրագրողները) համերաշխության վերաբերյալ կարծիքի առումով այլ պատկեր է: Այստեղ ցածր՝ «1» եւ «2» գնահատականներ տվողների տեսակարար կշիռն անցնում է 1/3-ից: Համերաշխության աստիճանին միջին գնահատական է տվել մոտ 45%-ը, իսկ բարձր գնահատական՝ ընդամենը մոտ 16%-ը: Լրագրողական ամբողջ համախմբում էլ համեմատաբար լավատեսական գնահատականներ են տվել թերթերի լրագրողները:

Հետազոտության խնդիրներից մեկն էլ ՁԼՄ-ների ղեկավարների ու պատասխանատու աշխատողների կողմից լրագրողական համերաշխության մակարդակի բարձրացմանն ուղղված գործնական առաջարկներ ստանալն էր:

*Ցավով պետք է արձանագրենք, որ լրագրողների մեծ մասի առաջարկները կրում են զգացմունքային կարգախոսների բնույթ եւ չեն պարունակում գործուն մեխանիզմներ, որոնք թույլ կտան բարձրացնել ՁԼՄ-ների եւ լրագրողների համերաշխության մակարդակը:*

Ներկայացնենք առավել հաճախ նշված առաջարկները.

- ապահովել ՁԼՄ-ների անկախությունը կուսակցական, կլանային, կորպորատիվ ազդեցություններից, բարձրացնել լրագրողների անաչառության աստիճանը (39.3%),
- հաճախակիացնել ՁԼՄ-ների միջեւ փորձի, տեղեկատվության փոխանակումը, իրականացնել համատեղ հրապարակումներ, մամուլ ասուլիսներ (20.6%),
- բարձրացնել լրագրողների միասնականության, փոխադարձ հարգանքի եւ հանդուրժողականության աստիճանը, վերացնել լրագրողների փոխադարձ նախանձը, խրախուսել համագործակցությունն ու մարդասիրությունը, չվարկաբեկել միմյանց (19.6%),
- բարձրացնել լրագրողների պրոֆեսիոնալիզմը եւ տեղեկատվության որակը (15.9%),
- հետամուտ լինել լրագրողական էթիկայի նորմերի պահպանմանը (14.0%),
- վեր կանգնել առետրային շահերից, հրաժարվել անառողջ մրցակցությունից (11.2% ),
- լրագրողների նկատմամբ ճնշումների դեպքում պաշտպանել միմյանց շահերը, ստեղծել լրագրողների շահերի պաշտպանության կազմակերպություններ, արհմիություններ (10.3%):

## Մաս 2. Բազմակարծության ապահովումը եւ ՁԼՄ-ների ֆինանսավորման թափանցիկությունը

Ներկա հետազոտության առաջնային խնդիրներից էր պարզել՝ **ՁԼՄ-ներում բազմակարծության ապահովման մակարդակը**, նրանց ֆինանսավորման աղբյուրների եւ սեփականության թափանցիկությունը, ինչպես նաեւ՝ միեւնույն սփռման գոտում մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ մեկից ավելի հեռուստաընկերության, կամ ռադիոընկերության կամ հեռուստառադիոընկերության փաստացի սեփականատեր լինելու փաստերի առկայությունը (հեռարձակման բնագավառի հակամենաշնորհային օրենսդրական պահանջի խախտումը): Այդ նպատակով հետազոտության ընթացքում փորձել ենք ստանալ՝

1. *լրագրող փորձագետների կարծիքը*՝ համապետական եւ ՏԻՄ ընտրությունների ժամանակ ու ոչ ընտրական ժամանակաշրջաններում իրենց ՁԼՄ-ի կողմից բազմակարծության ապահովման աստիճանի, ինչպես նաեւ՝ բազմակարծության լիարժեք ապահովմանը խանգարող պատճառների մասին,
2. *լրագրող փորձագետների պատկերացումը*՝ ՁԼՄ-ների ֆինանսավորման աղբյուրների եւ սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության մասին, ինչպես նաեւ՝ հեռարձակման բնագավառի հակամենաշնորհային օրենսդրական պահանջի խախտման փաստերին նրանց տեղյակությունը,
3. *կուսակցությունների ու ՉԿ-ների ներկայացուցիչների կարծիքը*՝ ՁԼՄ-ների կողմից բազմակարծության ապահովման աստիճանի, ինչպես նաեւ լրատվամիջոցներով իրենց կազմակերպությունների կարծիքն ազատորեն արտահայտելու հնարավորությունների մասին,
4. հեռարձակման բնագավառի հակամենաշնորհային օրենսդրական պահանջի խախտման փաստերին *կուսակցությունների ու ՉԿ-ների ներկայացուցիչների* տեղյակությունը:

### 2.1. Բազմակարծության ապահովումը

Լրագրող փորձագետներին առաջարկվել էր իրենց լրատվամիջոցում բազմակարծության ապահովման աստիճանը գնահատել 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է բոլորովին չի ապահովվել, իսկ «10»-ը՝ լիարժեքորեն ապահովվել է: Այս խմբի ընդամենը 12.2%-ն է համապետական ընտրությունների շրջանում բազմակարծության ապահովման աստիճանը ցածր՝ 1-4 գնահատել, միջին՝ 5-7 գնահատական է տվել մոտ 29%-ը, իսկ բարձր՝ 8-10 է գնահատել ավելի քան 54%-ը: Այս առումով առավել ինքնաքննադատաբար են մոտեցել ՉԸ-ների

ներկայացուցիչները, իսկ առավել բարձր ինքնագնահատական են տվել ՌԸ-ների ներկայացուցիչները:

ՏԻՄ ընտրությունների շրջանում բազմակարծության ապահովումը ցածր եւ միջին գնահատողների տեսակարար կշիռներն ավելի են փոքրացել (համապատասխանաբար՝ 9.3 եւ 21.5%): Հակառակ դրան, ավելի քան 10 տոկոսային միջով մեծացել է բարձր գնահատողների քանակը:

Ոչ ընտրական ժամանակահատվածներում բազմակարծության ապահովումը ցածր գնահատողների տեսակարար կշիռը մի փոքր եւս նվազել է (7.5%) եւ, ընդհակառակը՝ մեծացել է բարձր գնահատողներինը՝ հասնելով 2/3-ի: Վերջին երկու դեպքերում ՀԸ լրագրողների համեմատ ավելի բարձր է թերթերի լրագրողների ինքնաքննադատական վերաբերմունքը:

Ինչ վերաբերում է *կուսակցությունների ու ՀԿ-ների* ներկայացուցիչների խմբին, ապա 46.2%-ն այն կարծիքին է, որ ՁԼՄ-ները միշտ կամ հաճախ ապահովում են բազմակարծությունը: Այսպես կարծող կուսակցականների տեսակարար կշիռը գերազանցում է համակարծիք ՀԿ-ականների տեսակարար կշիռին: Ոչ լրագրող փորձագետների խմբի մոտ 53%-ը համոզված է, որ ՁԼՄ-ները հազվադեպ են ապահովում կամ երբեք չեն ապահովում բազմակարծությունը: Այս ենթախմբում գերակշռում է ՀԿ-ականների տեսակարար կշիռը:

ՁԼՄ-ներում բազմակարծության ապահովման մասին ընդհանուր կարծիքից զատ, կուսակցությունների ներկայացուցիչներից փորձել էինք պարզել, թե որքանով են իրենց կազմակերպությունները ՁԼՄ-ներով կարծիքն արտահայտելու դժվարությունների հանդիպում: Պարզվեց, որ այդ խմբի 58%-ը ոչ մի դժվարության չի հանդիպում, 34%-ին հազվադեպ է տրվում ՁԼՄ-ներով արտահայտվելու հնարավորություն, իսկ 8%-ը երբեք այդպիսի հնարավորություն չի ստանում (այս վերջինները բացառապես ընդդիմադիր քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներն են):

*ՁԼՄ-ներով կարծիք հայտնելու գործում երբեք ոչ մի դժվարություն չեն ունեցել Հայաստանի հանրապետական եւ Բարգավաճ Հայաստան կուսակցությունների ներկայացուցիչները, իսկ Հայ ազգային կոնգրեսի, մասնավորապես՝ դրա անդամ Հայաստանի ժողովրդական կուսակցության եւ Հայոց համազգային շարժման ոչ մի ներկայացուցիչ չի նշել, որ երբեք դժվարություն չի ունեցել:*

Այսքանով հանդերձ, հետաքրքիր էր պարզել, թե որոնք են **ՁԼՄ-ների կողմից բազմակարծությունը լիարժեքորեն չապահովելու պատճառները**: Նախ՝ ասենք, որ լրագրողների 8.4%-ը նշել է, թե իրենք բազմակարծությունն ապահովել են լիարժեքորեն, իսկ 28%-ը՝ թե չի եղել բազմակարծության ապահովմանը խանգարող որեւէ պատճառ: Այս ենթախմբում հեռուստատեսային եւ թերթային լրագրողների տեսակարար կշիռները գրեթե հավասար են:

Որպես բազմակարծությանն առավել խանգարող պատճառներ են նշվել երկրում անազատության մթնոլորտը, խոսքի ազատության ցածր մակարդակը, ընտրությունների ընթացքում կիրառված ճնշումները (21.5%):

*Այսպես նշողների ենթախմբում ակնհայտորեն մեծ է ՀԸ-ների ներկայացուցիչների տեսակարար կշիռը, ինչը թույլ է տալիս ասել, որ վերջինների նկատմամբ ավելի մեծ ճնշումներ են կիրառվում:* Այս մասին է վկայում նաև լրագրողների (բացառապես՝ հեռուստալրագրողներ) 7.5%-ի նշած հետեւյալ պատճառը. «քաղաքական լուրերի հեռարձակելուց խուսափելը, կոնկրետ ընտրությունների լուսաբանմանը չմասնակցելու մարտավարության որդեգրումը, կողմնակալ երեւալու մտավախությունից քաղաքական ուժերի ներկայացուցիչներին հաղորդումների հրավիրելուց ձեռնպահ մնալը»:

Բազմակարծության ապահովմանը խանգարող հաջորդ պատճառը ֆինանսական միջոցների պակասն է, հետեւաբար՝ ֆինանսական կախվածությունը իշխանական մարմիններից եւ այլ սուբյեկտներից (14.1%): Ի դեպ, այս պատճառը նշողների թվում գրեթե կրկնակի մեծ է թերթերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը:

Խոչընդոտող պատճառների շարքում հաջորդ տեղում է քաղաքական ուժերի պասիվությունը, այսինքն ՁԼՍ-ներին չդիմելը (9.3%): Այս պատճառը վկայակոչողների ենթախմբում ակնհայտորեն գերակշռում են ՀԸ-ների ներկայացուցիչները, *հատկապես՝ մարզային*, ովքեր բազմիցս նշել են, որ ընտրությունների շրջանում քաղաքական ուժերը նախընտրում են հանդես գալ համաերկրային սփռում ունեցող ՁԼՍ-ներով: Լրատվամիջոցների ներկայացուցիչների 6.5%-ը որպես բազմակարծության լիարժեք ապահովմանը խանգարող գործոն է նշել լրագրողների պրոֆեսիոնալիզմի պակասը:

## **2.2. ՁԼՍ-ների ֆինանսավորման աղբյուրների եւ սեփականության թափանցիկությունը**

Ինչ վերաբերում է ՁԼՍ-ների սեփականությանը եւ ֆինանսավորման աղբյուրներին, ապա լրագրող փորձագետների միայն 12.3%-ի կարծիքով է ապահովվում վերջինների թափանցիկությունը, 43%-ի կարծիքով չի ապահովվում, մոտ 44% փորձագետներ էլ դժվարացել են պատասխանել այդ հարցին: Թափանցիկության չապահովում նշածների ենթախմբի ավելի քան 54%-ը հեռուստալրագրողներ են, սակայն այդ կերպ կարծող թերթային լրագրողների տեսակարար կշիռը մի փոքր պակաս է՝ մոտ 46 տոկոս: Բոլոր ռադիոլրագրողները դժվարացել են կողմնորոշվել այս հարցում:

Հետաքրքիր է նաև թափանցիկության մասին պատկերացումների եւ լրագրողների փորձառության փոխհարաբերությունը: Այս առումով ուղիղ համեմատական կորելիացիոն կապ է դիտարկվում. *փորձառության աճի հետ աճում է քննարկվող հարցում հստակ կողմնորոշվածների*

*տեսակարար կշիռը կամ նվազում է պատասխանել դժվարացողների տեսակարար կշիռը: Այս նույն միտումն է նկատվում նաև թափանցիկության բացակայությունը մատնանշողների խմբում:*

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ միեւնույն սփռման գոտում միեւնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից մեկից ավելի հեռուստաընկերության կամ ռադիոընկերության կամ հեռուստառադիոընկերության սեփականատեր լինելու արգելքը (հեռարձակման բնագավառի հակամենաշնորհային օրենսդրական պահանջ) պահպանելու կապակցությամբ լրագրողների կարծիքները բաշխվում են հետեւյալ կերպ. 21.5%-ի կարծիքով այն պահպանվում է, 27.1%-ի կարծիքով՝ չի պահպանվում, իսկ 47.7%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին: Օրենսդրական այս պահանջի պահպանման վերաբերյալ դրական պատասխան տվածների խմբում ՀԸ եւ ՌԸ ներկայացուցիչների տեսակարար կշիռները գրեթե հավասար են՝ մոտավորապես 25-ական տոկոս: Հակառակ կարծիքն ունեն ՀԸ-ների ներկայացուցիչների ավելի քան 21%-ը եւ թերթերի լրագրողների մոտ 33%-ը:

Չկողմնորոշվածների խմբում ՀԸ եւ թերթերի լրագրողների տեսակարար կշիռները հավասար են:

Այս հարցի վերաբերյալ հասարակական եւ քաղաքական գործիչներն ունեն համեմատաբար ավելի դրական կարծիք: Քաղաքական կազմակերպությունների 28 եւ ՀԿ-ների ներկայացուցիչների մոտ 35%-ի կարծիքով հեռարձակման բնագավառի հակամենաշնորհային օրենսդրական պահանջը պահպանվում է: Հակառակ կարծիքին են կուսակցականների 32 եւ ՀԿ-ականների 23.5%-ը: Չկողմնորոշվածները կազմում են այդ խմբերի, համապատասխանաբար, 40 եւ 41.7%-ը: